

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒՆԴԵՍԹԱԳԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ԱՆՏՅԵ ՖՈԼՄԵՐԻՆ

Հոկտեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բունդեսթագի փոխնախագահ Անդրյե Ֆոլմերին:

Վեհափառ Հայրապետն ուրախությամբ նշեց, որ Հայ Եկեղեցու հոբելյանական տարում բարեկամ երկրների ներկայացուցիչների այցելությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածին նկատում է իբրև ներդրում Հայոց մեծ դարձի հոբելյանին, իսկ յուրաքանչյուր այց Գերմանիայից՝ գեղեցիկ հուշեր է արթնացնում նաև գերմանացի ժողովրդի և Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու մասին, որոնց բարեսիրտ ուշադրությունն է վայելել այդ երկրում ուսանելու տարիներին: Վերջինիս առիթով Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ փաստեց, որ այսօր էլ Հայ Եկեղեցու շատ հոգևորականներ իրենց ուսումը շարունակում են Գերմանիայի համալսարաններում:

Զրույցի ընթացքում, ի պատասխան տիկ. Ֆոլմերի հարցադրումների, Նորին Սրբությունն իր տեսակետն արտահայտեց քրիստոնյա Եկեղեցիների միջև փոխհարաբերությունների, երիտասարդության դաստիարակության հարցում Եկեղեցու դերի վերաբերյալ, ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՄԻ ԽՈՒՄԲ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ

Հոկտեմբերի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին մի խումբ ադրբեջանցի լրագրողներ: Հանուն Ամենայն Հայոց Հայրապետի հյուրերին ողջունեց Տ. Փառեն եպս. Ավետիքյանը:

Սրբազան Հայրն ուրախությամբ փաստեց երկու ժողովուրդների հոգևոր պետերի միջև սկսված երկխոսությունը՝ ի նպաստ հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման: Վերջինիս առիթով Գերաշնորհ Սրբազանը կարևոր նկատեց նաև լրագրողների աշխատանքը՝ հույս հայտնելով, որ ադրբեջանցի լրագրողների այցը Հայաստան նույնպես իր օգտակարությունը կարող է ունենալ երկու ժողովուրդների միջև հարաբերությունների կարգավորման գործում:

«Ապրված տնօրինել է, որպեսզի մենք ապրենք միմյանց հարևանությամբ, և մենք պետք է լինենք բարեկամներ՝ անկախ կրոնական մեր պատկանելությունից», - ասաց Փառեն Սրբազանը:

Հանդիպման ընթացքում ադրբեջանցի լրագրողները հետաքրքրվեցին Հայաստանում իրականացվող եկեղեցաշինությամբ, Հայ Առաքելական Եկեղեցու և կրոնական տարբեր կազմակերպությունների միջև եղած հարաբերություններով:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԴՐԻԱՆ ՍԵՎԵՐԻՆԻՆ ԵՎ ՄԱՐՍԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Հոկտեմբերի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ադրիան Սևերինին:

Պրն Սևերինը Վեհափառ Հայրապետին շնորհավորեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանի առիթով և բարձր գնահատեց Հայ Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում:

Հանդիպման ընթացքում խոսվեց մարդկության անվտանգության ապահովման, աշխարհում և մասնավորապես տարածաշրջանում խաղաղության հաստատման խնդիրների, դրանց լուծման գործում Եկեղեցու դերակատարության շուրջ:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ Եկեղեցին քարոզիչն է խաղաղության, սիրո ու բարեկամության, և Տիրոջ այս պատգամներին դարեր ի վեր հավատարիմ են Հայ Եկեղեցին և ժողովուրդը:

«Մենք գիտակից ենք մեր առաքելությանը, և այդ գիտակցությամբ են ընթանում նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Ադրբեջանի հոգևոր պետերի միջև շարունակվող հանդիպումները»,- անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության խնդրին, փաստեց Հայոց Հայրապետը՝ նշելով, որ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում, ի դեմս Եկեղեցու, ԵԱՀԿ-ն կարող է ունենալ ակտիվ ու աջակից գործակից: Նորին Սրբությունը վկայեց նաև, որ ղարաբաղյան հիմնախնդիրը չունի կրոնական բնույթ: Այն զերծ է կրոնական հիմքից:

Նույն օրը Նորին Սրբությունն ընդունեց Մարսելի քաղաքապետ Ժան Կլոդ Գոդենի գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը ուրախությամբ ողջունեց Մարսելի և Երևանի միջև սկիզբ առած եղբայրական փոխհամագործակցությունը՝ նշելով, որ այն առավել չափով ամրապնդում է երկու ժողովուրդների բարեկամությունը:

Նորին Սրբությունը երախտագիտությամբ նշեց, որ Ֆրանսիան մշտապես աջակից է եղել հայ ժողովրդին, իսկ 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչումը Ֆրանսիայի կողմից, որին իր նպաստն է բերել նաև Մարսելի քաղաքապետը, Վեհափառ Հայրապետը նկատեց իբրև Ֆրանսիայի մարդասեր ոգու դրսևորման և հայ ժողովրդի նկատմամբ ունեցած գնահատանքի վկայություն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻ «ԻՇԽԱՆ ՅԱՐՈՍԼԱՎ ԻՄԱՍՏՈՒՆ» 5-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՔԱՆՇԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Ուկրաինայի Հանրապետության նախագահ Լեոնիդ Կուչմայի հոկտեմբերի 2-ի հրամանագրով շնորհվել է Ուկրաինայի «Իշխան Յարոսլավ Իմաստուն» 5-րդ աստիճանի շքանշան: Շքանշանը Վեհափառ Հայրապետին շնորհվել է հայ-ուկրաինական հոգևոր կապերի զարգացման և միջեկեղեցական կապերի ամրապնդման գործում ունեցած նշանակալի ավանդի համար:

Հոկտեմբերի 29-ին, այցելելով Մայր Աթոռ Ս. Էջմիածին, շքանշանը Ամենայն Հայոց Հայրապետին հանձնեց Հայաստանում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն: Ինչպես նշեց դեսպանը, Ամենայն Հայոց Հայրապետն առաջին հոգևոր առաջնորդն է, որ պարգևատրվում է Ուկրաինայի պետության այս շքանշանով:

«Իշխան Յարոսլավ Իմաստուն» պետական շքանշանը հաստատվել է Ուկրաինայի նախագահի կողմից 1995 թ.: Այն տրվում է Ուկրաինայի և այլ երկրների պետական բարձրաստիճան, ինչպես նաև անվանի հասարակական ու հոգևոր գործիչների:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆինլանդիայի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ, տիկին Միրկա Լիսա Անտիլայի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու առաքելությանը՝ ուրախությամբ փաստելով անկախ Հայաստանում Եկեղեցուն ընձեռված լայն հնարավորությունների մասին: Նորին Սրբությունը նշեց, որ այսօր Հայ Եկեղեցին վերանորոգման շրջան է ապրում՝ փորձելով հաղթահարել Եկեղեցու առջև ծառացած դժվարությունները և խորհրդային անաստվածության տարիների

հետևանքները: Աշխատանքներ են տարվում նաև աշխարհի տարբեր երկրներում հայ եկեղեցական համայնքային կյանքի ձևավորման համար: Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ վերջերս նման մի համայնք է ստեղծվել նաև Ֆինլանդիայում, որն առաջիկայում կունենա իր հոգևոր հովիվը:

Ի պատասխան տիկ. Անտիլայի հարցման, Նորին Սրբությունն անդրադարձավ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով Հռոմի Պապի Հայաստան կատարած այցին, Հայ Առաքելական և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա ջերմ կապերին:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Ֆինլանդիայի դեսպան Տիմո Լահելման: Դեսպանը Վեհափառ Հայրապետին փոխանցեց Ֆինլանդիայի արքեպիսկոպոսի նամակը՝ նշելով, որ վերջինս ցանկություն է հայտնել հանդիպելու Հայոց Հայրապետի հետ: Նորին Սրբությունն ուրախությամբ ողջունեց Հայ Եկեղեցու և Ֆինլանդիայի Եկեղեցու միջև կապերի ամրացմանը նպաստող նման քայլերը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հոկտեմբերի 31-ին Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Նիդերլանդների ֆինանսների նախարար Խեյրիտ Զալմին:

Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց հայ-հոլանդական կապերի զարգացման առնչությամբ՝ նշելով, որ այդ կապերը ձգվում են դեպ պատմության խորքերը: Դեռևս 17-րդ դարում Ամստերդամի Ս. Էջմիածնի և Ս. Մարգսի անվան տպարանում Ոսկան վարդապետ Երևանցին հրատարակել է հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչը: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ նշեց, որ այսօր վերստին Ամստերդամում գործում է 18-րդ դարի հայկական եկեղեցին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 30-31-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ երիտասարդական միջթեմական ժողով՝ Կանադայի հայոց թեմի առաջնորդ, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի նախագահությամբ:

Ժողովի մասնակիցները՝ երիտասարդներ Հայաստանի և սփյուռքի թեմերից, քննարկեցին 1700-ամյակի եկեղեցական գրասենյակին կից ստեղծված Երիտասարդական ուխտագնացության գրասենյակի կատարած աշխատանքները, մասնավորապես՝ 1700-ամյակի առիթով այս տարվա հուլիսի 10-19-ը կազմակերպած երիտասարդական մեծ ուխտագնացությունը Հայաստանի սրբավայրեր: Քննարկվեցին նաև 2002 թ. կայանալիք երիտասարդական ուխտագնացությունների կազմակերպման հարցերը:

Ժողովականները որոշեցին առայժմ մեկ տարի ժամանակով, ստեղծել երիտասարդական կազմակերպությունների համահայկական խորհուրդ: Վերջինիս նպատակն է լինելու Հայ Եկեղեցու երիտասարդական կազմակերպությունների ստեղծման և զարգացման գործին աջակցությունը, այդ կազմակերպությունների անդամների թվի համալրումը, թեմերի միջև հաղորդակցության ապահովումը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ԻՆԴՈՒԼԻՍ ԲԵՐԶԻՆՇԻՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՆ ԵՎ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Նոյեմբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լատվիայի Հանրապետության արտգործնախարար Ինդուլիս Բերզինշին:

Վեհափառ Հայրապետը ոգևորիչ և ուրախալի համարեց երկու երկրների միջև զարգացող կապերը: Հայոց Հայրապետը նշեց, որ այդ կապերի ամրապնդմանը իր նպաստն է բերում Լատվիայի երիտասարդ հայ համայնքը՝ երախտագիտությամբ նշելով նաև վերջինիս հանդեպ Լատվիայի իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը:

Պրն Բերզինշը շնորհավորեց Նորին Սրբությանը՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով: Նախարարն ուրախությամբ նշեց, որ Լատվիան նույնպես փոնում է Հայ Եկեղեցու մեծ հոբելյանը, իսկ 1700-ամյակի առիթով Ռիգայի կենտրոնում բացված ցուցահանդեսը յուրօրինակ ուխտավայր է դարձել ոչ միայն հայերի և լատիշների, այլև Լատվիա այցելող բոլոր հյուրերի համար:

Նույն օրը, երեկոյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի առաջին փոխարտգործնախարար Վյաչեսլավ Տրուբնիկովին և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ ղարաբաղյան հակամարտության հարցով ԱՄՆ-ի հատուկ բանագնաց, դեսպան Ռուդոլֆ Փերինային, ֆրանսիական կողմից՝ Ֆիլիպ դը Սյուրմենին, և Ռուսական կողմից՝ համանախագահ Նիկոլայ Գրիբկովին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց խաղաղության պատգամով Մայր Աթոռ ժամանած բանագնացներին՝ նշելով, որ հայ ժողովրդի ձգտումն է ղարաբաղյան հակամարտությունը լուծել բացառապես խաղաղ ճանապարհով: Այս առիթով Նորին Սրբությունը մտահոգություն հայտնեց վերջին շրջանում Ադրբեջանում և Թուրքիայում հնչող պատերազմի սպառնալիքների առնչությամբ, որոնք միայն խոչընդոտում են հակամարտության լուծմանը: Ամենայն Հայոց Հայրապետն իր զորակցությունը հայտնեց Մինսկի խմբի խաղաղասիրական առաքելությանը՝ նշելով, որ այդ

նպատակին են ուղղված նաև երկու ժողովուրդների հոգևոր առաջնորդների պարբերական հանդիպումները:

Պարոն Տրուբնիկովն ընդգծեց հակամարտության կարգավորման գործում հոգևոր կառույցների համագործակցության կարևորությունը.

«Ձեր հեղինակությամբ և ազդեցությամբ դուք կարող եք անել ավելին, քան քաղաքագետները»,- համոզմունք հայտնեց Ռուսաստանի փոխարտգործնախարարը:

ԱՄՆ հատուկ բանագնաց, դեսպան Ռուդոլֆ Փերինան առանձնահատուկ ընդգծեց, որ տարածաշրջանում հնչող ռազմատենչ հայտարարություններն անհեռանկար են և զուրկ՝ իրական հիմքից:

Ֆրանսիացի համանախագահ Ֆիլիպ դը Սյուրմեն արձանագրեց, որ տարածաշրջանային թնջուկի շուտափույթ կարգավորումը օրվա հրամայականն է, և շատ կարևոր նկատեց այն հանգամանքը, որ հակամարտությունը կրոնական չէ:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՆ ԱՎԱՐՏԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԵՑԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Նոյեմբերի 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Հայաստանի Ամերիկյան համալսարանի փոխտնօրեն Դոնալդ Ֆուլլերն ավարտական վկայականներ հանձնեց համալսարանի մենեջմենթի հատուկ դասընթացներն ավարտած 22 հոգևորականների:

Առաջին անգամ Ամերիկյան համալսարանում հատուկ հոգևորականների համար այս դասընթացները կազմակերպվել էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջարկությամբ՝ Հայ Եկեղեցու հոգևորականին, իբրև հոգևոր առաջնորդի ու հովվի, բազմակողմանի գիտելիքներ հաղորդելու նպատակով:

Ուսման մեկ տարվա ընթացքում դասընթացի մասնակիցները՝ Մայր Աթոռի միաբաններ ու քահանաներ, շնորհիվ համալսարանի դասախոսների, գիտելիքներ են ստացել մենեջմենթի, մարքեթինգի ու ֆինանսների վերաբերյալ, հաճախել են համակարգչային և անգլերեն լեզվի ուսուցման արագացված դասընթացների, իսկ իբրև ավարտական աշխատանք յուրաքանչյուր հոգևորական ներկայացրել է իր բիզնես ծրագիրը:

Նորին Սրբությունը, ի դեմս համալսարանի փոխտնօրենի և ծրագրի ղեկավար Դեն Սթիվենսոնի, իր շնորհակալությունը հայտնեց համալսարանի դասախոսներին դասընթացների կազմակերպման համար: Կարևոր համարելով նման գիտելիքների անհրաժեշտությունը, Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ առաջին այս փորձը կունենա իր շարունակությունը: Իսկ դասընթացի առաջին շրջանավարտները, ստանալով Նորին Սրբության շնորհավորանքները, նաև մի փոքրիկ քննություն հանձնեցին Հայոց Հայրապետին իրենց այստեղ սովորածի վերաբերյալ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Նոյեմբերի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ստանալու նպատակով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ՀԺԱՄ նորաստեղծ կուսակցության վարչության անդամները՝ կուսակցության նախագահ Սեյրան Ավագյանի գլխավորությամբ:

Հայոց Հայրապետը նորաստեղծ կուսակցության անդամների այցը հայոց հոգևոր կենտրոն նկատեց իբրև հայրենիքի և ժողովրդի գերագույն շահերի գիտակցության արտահայտություն: Նորին Սրբությունը, մտահոգիչ համարելով երկրում կուսակցությունների մեծաթվությունը, հույս հայտնեց, որ նորաստեղծ կուսակցության համար մշտապես գերակա կլինեն ազգային շահն ու երկրի բարօրությունը: Այս մաղթանքով էլ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց ՀԺԱՄ-ի անդամներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՀԱՆՁՆԵՑ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակով հայ մեծանուն կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանին, ծննդյան 80-ամյակի առիթով, շնորհվեց Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան՝ իբրև գնահատանք փաղանդաշատ կոմպոզիտորի ունեցած մեծ վաստակի:

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհարանի հանդիսությունների սրահում, շքանշանը հոբելյարին հանդիսավորապես հանձնեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանն ընթերցեց Հայրապետական Կոնդակը, որում մասնավորապես ասված է.

«Ուրախ ենք մեծապես, որ Ձեր հոբելյանը Դուք դիմավորում եք փարիների վաստակով ծանրաբեռն, երախտագետ մեր ժողովրդից սիրված ու մեծարված, ազատ ու անկախ Հայաստանի հայրենի պետության գնահատանքին արժանացած:

Տաղանդաշատ երգահանի Ձեր անունը լայնորեն ծանոթ է երաժշտասեր հասարակայնությանը ինչպես Մայր Հայրենիքում, այնպես և նրա սահմաններից հեռու: Ձեր ստեղծագործությունները հայկականության շնչով, բարձրարվեստ երաժշտության անդիմադրելի զորությամբ թափանցում են մարդկային հոգու խորքերը և հաստատվում այնտեղ սիրո, բարու, հույսի ու լավատեսության ապրումներով: Տասնամ-

յակներ շարունակ երաժշտի Ձեր կարողությունները, ճաշակն ու փորձառությունը Դուք անմնացորդ ու անսակարկ նվիրումով փոխանցել եք երիտասարդներին՝ կրթելով ու զորացնելով նրանց հոգիներում հավատարմությունը արվեստին, սերը հանդեպ հայրենի երգն ու երաժշտությունը և հավատ սերմանելով կյանքի ու մարդու նկատմամբ, որը մեր ժողովրդի քրիստոնեական մտածողության արտահայտությունն է» (ամբողջական կոնդակը տե՛ս «Էջմիածին», 2001 թ., № Զ-Է, էջ 52):

Կոմպոզիտոր Էդ. Միրզոյանը երկար տարիներ եղել է ՀՀ կոմպոզիտորների միության նախագահ: Այսօր էլ մաեստրոն շարունակում է հասարակական գործունեությունը՝ նախագահելով Խաղաղության հիմնադրամը, որի պատվավոր անդամն է նաև Ամենայն Հայոց Հայրապետը:

Հանդիսության ընթացքում հնչեցին կոմպոզիտորի ստեղծագործություններից, իրենց կատարումներով մաեստրոյին շնորհավորեցին հանրահայտ երգչուհի Արաքս Դավթյանը, ջութակահար Նիկոլայ Մադոյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Արարատյան Հայրապետական թեմի երգչախմբերը:

Շքանշանի հանձնման արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերով նախարար Ռոլանդ Շառոյանը, մշակույթի գործիչներ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳՐԵՐ ՀԱՆՁՆԵՑ «ՇՈՂԱԿԱԹ-2001» ՀԵՌՈՒՍՏԱՓԱՌԱՏՈՆԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Նոյեմբերի 14-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց և գնահատանքի գրեր հանձնեց «Շողակաթ-2001» հեռուստափառատոնի մրցանակակիրներին:

Արդեն երկրորդ տարին է, ինչ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Շողակաթ» հեռուստաստուդիան կազմակերպում է հոգևոր թեմաներով ֆիլմերի և տեսանյութերի մրցույթ-փառատոն՝ նրանց ստեղծմանը խթանելու նպատակով:

Նորին Սրբությունը, իր գնահատանքը հայտնելով փառատոնի կազմակերպիչներին ու մասնակիցներին, նշեց, որ հոգևոր թեմաներով հեռուստահաղորդումներն ու ֆիլմերը նպաստում են ոչ միայն Հայ Եկեղեցու քարոզչությանը, այլև հասարակության հոգևոր-բարոյական դաստիարակությանը:

Նոյեմբերի 10-ին կայացած «Շողակաթ-2001» փառատոնին ներկայացված էր 19 հեռուստաֆիլմ, 6 հեռուստահաղորդում և 6 տեսահոլովակ:

Հեռուստափառատոնի գլխավոր մրցանակը՝ նոնաքարերով զարդարուն ճաճանչախաչը, որին նախորդ տարի չարժանացավ և ոչ մի աշխատանք, այս տարի շնորհվել է «Սուրբ ծեսերի երկիր» ֆիլմի հեղինակներին: Ֆիլմի հեղինակներին մրցանակներ են շնորհվել նաև այլ նոմինացիաներում: Փառատոնի ինքնատիպ ռեժիսոր է ճանաչվել «Սուրբ ծեսերի երկիր» ֆիլմի օպերատոր Էդգար Բաղդասարյանը, իսկ լա-

վագույն օպերատորական աշխատանքի համար մրցանակ է շնորհվել նույն ֆիլմի օպերատոր Վահագն Տեր-Հակոբյանին:

Հաջողված երաժշտական և հնչյունային ձևավորման համար մրցանակի է արժանացել «Մանկանոց» հեռուստաֆիլմի հնչյունային օպերատոր Արսեն Գրիգորյանը:

Խստապահանջ ժյուրիի որոշմամբ այս փառատոնին մրցանակներ չեն տրվել լավագույն հեռուստահաղորդման և տեսահոլովակի համար:

«Շողակաթ-2001» հեռուստափառատոնի գնահատող հանձնախումբը խրախուսական մրցանակներ էր սահմանել նաև հոգևոր թեմայով ճանաչողական ֆիլմերի համար, որոնք շնորհվել են «Մանկանոց» և «Երերույթ» հեռուստաֆիլմերի ստեղծագործական խմբերին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԴ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆԱԽԱՆԳԱՊԵՏ ՎԱԼԵՐԻ ՍԵՐԳՅՈՒԿՈՎԻՆ

Նոյեմբերի 28-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Սանկտ Պետերբուրգի նախանգապետ Վալերի Սերգյուկովի գլխավորած պատվիրակությանը:

Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց հայ և ռուս ժողովուրդների միջև դարավոր կապերի սերտացման և ամենատարբեր ոլորտներում փոխհամագործակցության ամրապնդման առնչությամբ: Այս առիթով Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև Հայ և Ռուս Եկեղեցիների եղբայրական կապերին: Ինչպես նշեց Հայոց Հայրապետը, եկող տարվանից, վերսկսելով փոխհամագործակցությունը կրթական ոլորտում, հայ ճեմարանավարտները կրկին կմեկնեն Զագորսկ՝ խորացնելու աստվածաբանական գիտելիքները Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգևոր ակադեմիայում:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց նաև ռուսական իշխանությունների աջակցությունը Ռուսաստանում բնակվող հազարավոր հայերին, որի լավագույն արտահայտություններից մեկն է Սանկտ Պետերբուրգի ծաղկուն համայնքը:

Հանդիպմանը ներկա էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Միացյալ Նահանգների նորանշանակ դեսպան Ջոն Օրդուեյին:

Ողջունելով դեսպանին, Վեհափառ Հայրապետն ուրախությամբ նշեց երկու երկրների միջև կապերի զարգացումը: Նորին Սրբությունը բարձր գնահատեց ԱՄՆ

նախորդ դեսպանների գործունեությունը և համոզմունք հայտնեց, որ նորանշանակ դեսպանը նույն նախանձախնդրությամբ կշարունակի իր նախորդների աշխատանքը:

Վեհափառ Հայրապետը միաժամանակ իր երախտագիտությունը հայտնեց դեսպանին ամերիկյան այն աջակցության համար, որ ցուցաբերվում է ինչպես երկրի տնտեսության զարգացման, այնպես էլ ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործում:

Դեսպանի խնդրանքով Նորին Սրբությունը ներկայացրեց Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայիս գործունեությունը, անդրադարձավ Եկեղեցու խնդիրներին: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ տեղեկացրեց, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի սաներն ասպվածաբանական իրենց գիտելիքները հարստացնելու նպատակով, ի թիվս արտասահմանի տարբեր երկրների, գալիք տարի կմեկնեն նաև Միացյալ Նահանգներ:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌԱԿ ԵՎ ՀՌԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Նոյեմբերի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռամկավար Ազատական կուսակցության ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ Սփյուռքից ու Հայաստանից, որոնք այս օրերին հայրենիքում միասնաբար տոնում են ՌԱԿ 80-ամյա և ՀՌԱԿ 10-ամյա հոբելյանները:

Նորին Սրբությունը, շնորհավորելով ներկաներին հոբելյանների առիթով, իր գնահատանքը հայտնեց Ռամկավար կուսակցությանը՝ նշելով, որ կուսակցությունը մշտապես առաջնորդվել ու առաջնորդվում է ազգային միասնականության ոգով, Հայաստանին աջակից ու նեցուկ լինելու վճռականությամբ:

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյա օրհնությունը ձեր հայրենաշեն ու եկեղեցանվեր գործերին», - մաղթեց Հայոց Հայրապետը:

ՌԱԿ և ՀՌԱԿ ատենապետները՝ Հակոբ Գասարճյանը և Ռուբեն Միրզախանյանը, ներկաների անունից շնորհակալություն հայտնեցին ընդունելության համար՝ հավաստիացնելով, որ կուսակցությունը շարունակելու է աջակից լինել Մայր Եկեղեցուն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ Մայր Աթոռը դիտելով համայն հայության հոգևոր կենտրոնը:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու 1700-ամյա հոբելյանին և նրա նշանակությանը հայ ժողովրդի կյանքում: